

Կանգնել է մի շենք անա,
 Ու մի արք ոսկի հագած,
 Ճակատին նրա՛ պլխա
 Բրաճոյ մուրն ու մանգալ:

Երկի՛ր իմ, հագար գոյնով,
 Արեւով հարբասացած,
 Կանգնել ես անա դու նոր,
 Լխա՛լիք ու արսաբաց...:

ԱՇՈՒՆ

Հասկե՛րն եմ խոր շրթնջում,
 Հասկե՛րն եմ թե սիրն է իմ,
 Ան՛սն իմ, գրա՛ւրք առնն,
 Հասար դու իմ կարօտին:

Ժպտում եմ հանդ ու արեւ,
 Վառում եմ նրով ներքին,
 Բացե՛ր ես անա հանդես
 Մե՛կերի, մե՛կի, երգի...:

Առնն իմ վառ ու վերջին,
 Դառե՛րի զեղնաբառ ձի, —
 Թռչուն ես, — անցար վերից
 Արեւի միտքը կցցիղ...:

ԵՐԿՈՒՆՔ

Դառե՛րում սեզ ու ծաղիկ,
 Հիւզերում ո՛րքան մանուկ,
 Դալի՛՛ք իմ, յուսե՛ գալիք,
 Երկի՛ր իմ, ե՛րգ իմ անուշ...:

Իմ երկի՛ր աստղերի սակ
 Դեռ ծնունդ ո՛րքան մանուկ...
 Յ՛ր երկունիս խոր ու յսակ,
 Երկի՛ր իմ, ե՛րգ իմ անուշ...:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀՆԵՐԻ

1928 Երեւան

ԲԱՆԱՍՏԵՆԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. ՆՈՐԵՆՑԻ

Միե՛կի՛ ընկեր ու սիրելի՛ կին,
 Որ բազառում ես անհամբեր, մրաայ,
 Ի՛նչ պատասխանեմ ես քո նամակին,
 Որ յամառում է սեղանիս վրայ:

Նրա սողերը կարծես Ամուրի
 Պրկած աղեղի սղախներն են սուր...
 Թրում է՝ ոչ թե կարգում եմ լրտին
 Այլ քո կարկաշող խօսքերն եմ լրում:

Ու քո շնչի՛ սակ փրթում եմ, ծաղկում
 Ցոյգերիս վարդե՛րը անթիւ, անթիւ ...
 Դուրսը ձխում է... Ի՛նչ վարդեր ... ա՛խ, քու
 Այդ մեղկ նամակը ուսմանիկ:

Դուցե՛ նրանից, նրանից է այդ
 Որ դու ապրում ես ինձանից հեռու,
 Այնտեղ ուր ծովն է ցոյում յուսարձաք
 Եւ մտականաչ ափերը ներում:

Եւ չըզկեղով քո մարմնից պիտի,
 Չըհամբուրելով շրթներդ հասուն,
 Երբեմն ես էլ նայեալս ուսմանիկ՝
 Անմարմին, հեռու սե՛ր եմ երազում:

Դիտե՛մ, կարօտ է հուրն այդ ներարկում
 Եւ յուզում սիրքս մի անմիտ դալով...
 Կ՛անցնի, նա, հեկց որ հազնիմ վերարկաւս
 Եւ ելնեմ փողոց:

Կը մրնայ միայն՝ խոր եւ իմասուն՝
 Սերը՛ յոյգերիս յասակում քրնած,
 Երբ հեռաններից վերադառնաու դու,
 Կը բարբոսի նա:

✱

Ամեն սիրոյ մեջ, գրում ես դու ինձ,
 Մի էիչ ուսմանիկով, քրնեբուրիս կայ,
 Սերը սիրում է կարօտանիս, յախի՛ծ,
 Մբուռնս ափերն անյայտ, հեռակայ...:

Օ՛, ո՛չ, ես արտի ռոմանթիզմն է այդ
 Որ ցոլանում է սիրոյդ մէջ անգոհ.
 Երէ չըլինի այդ սերը վրհաս,
 Կա պիտի պարսկար ուրիշ ակունքով:

Մեր մեր եղաւ այն լրնակը ջինջ
 Ափէ-ափ ծրփող, երազուն-գերող,
 Որի բովանական ջրերի միջին
 Ինքնոք ինք սեւար սրխուր աչքերով

Ու ինք թրում է, ով որ էլ նայի,
 Կոյն սրխուր դեմքն է այնտեղ երեւում,
 Կոյն իսկ հրախիւնդ արեւն երկնային
 Տրխուր գիշերուայ նրա ջրերում:

✱

Չուզողիպումն այս կարծես հեզում է
 Մեր քննութիւնը, սերը՝ հիմնովին.
 Կամակրոք բողած հիսայ գրում եմ...
 Ժողովի:

Ու ես, Պօքս, որ իմ սիրոյ մէջ
 Երբեմն ակամայ, անմիտ թեւում եմ
 Կրնում եմ հիսայ մղելու բանավէն
 Թեւումներն դեմ...

Պօքսն երբեմնի, հեց որ յոգնում էր
 Կեանքից՝ թեւում էր դեպ երբն աննուն,
 Թեւ դեպ երբն ինչքան թեւում էր՝
 Ոտն էլի հողին, կեանքին էր յեւում:

Իսկ հիսայ ինչպէս թեւում էլ լինի՝
 Կոյն իմաստն ունի, որ, մանեման.
 Տանում է կեանքը ու կապում հրնին՝
 Թողած ուղիներն նոր կեանքի կերտման:

✱

Ու մեր այս սերը այսպէս ռոմանթիկ
 Ո՛ր է անելու մեզ կամաց կամաց...
 Տարբեր յանգերով երգում են մարդիկ
 Միեւնոյն երգը յանախ ակամայ:

Անա ծիծաղի նրման յսակ է
 Ու ժպտում է իմ դեմքիս այս լինը...
 Սովկայն լզգստուեց... սիլմ էր յսակը...
 Այնտեղ նեւածրս մի փոքրիկ խին էր:

Հապա մի սիրքդ շարժի՛ր կամացուկ,
 Ի՛նչքան հրնութիւն կայ մեր յոյգերում,
 Մեր արիւնի մէջ, մեզանից ծածուկ...
 Եւ հին ենք եւ նոր, կամուրջի սերունդ:

Մեր սերն իսկ կարծես մի փոքրիկ խին էր,
 Որ ներաւսարհը մեր այսպէս յուզեց...
 Թողնենք բառերի աղմուկն ու հիշք
 Եւ մեր արիւնի գիշերը սուգաւենք:

Այս սանդղակնայ սիրով հազիւ թէ
 Կոր իմաստ առնէ մեր կեանքը, հազիւ...
 Զրքենք մեր սիրքը, մեր սիրքը գրքենք
 Որ օրերի հետ ներգաւեակ հասի:

1929 Յունուար

✱ ✱ ✱

ՄԱՅՐԸ

Գլխիս վերեւ ամէն գիշեր
Անձայն թռչուն մի կը թառի.
Ուսկից կը գայ նա չեմ յիշե,
Տրխուր ընկերն իմ սընարի:

ձերմակ է նա՝ փրփուր-փետուր,
Կարծես լոյսի ալիք է ջինջ,
Որ քըշել է մուծը մըրուր
Մենանոցիս ծոցը անջինջ:

Կը թառի նա տըխուր ու լուռ,
Գուռ-աչքերով ինձ կը նայի.
Ջուր կ'աղերսեմ նըրանից լուր,
Ու նայուածքըս վար կը սահի...

Երբ կը ցանկամ տեսնել կրկին,
Է՛լ նա չըկայ, ոչ էլ իր չսն.
Ու... Թըռել է դէպ ի երկինք,
Իմ մըտերիմ ձերմակ թռչուն:

ՀԱՅՐԸ

Կիսախարխուլ մի խուց է, հի՛ն,
Ծոցում կանթեղ մի դալկաբոց.
Մի ծերուկ իր միստիք հոգին
Ծըխում է լուռ, անհեծկտոց:

Գլխին կեանքի ձիւնն է իջել
Ու կախուել է միբուքից վար.
Տահար դէմքին երկու աչեր՝
Յոյս-հաւատքի ջահեր են վառ:

Ձեն շարժըում շուրթերն իր չոր,
Խոր հոգու մէջ կ'աղօթէ ինք.
Եւ իր սիրտը թախծատոջոր
Աղօթքի տեղ կ'ենէ երկինք:

Կը նուաղի լոյսըն կանթեղի,
Իր աչքերն էլ նըրա նըման,
Ինքն էլ, դարձած մի լոյս դեղին,
Լուռ կը ձուլուին, կ'անէանան...

ՔՈՅՐԸ

Մի դէմք ունի՝ ասես լուսին,
Շուրջը երկու ամպ խոպոպիկ.
Վարսերի հետ սափորն ուսին
Ջրի կ'երթայ ոտաբորիկ:

Փըպիտ մ'ունի աչքերի տակ,
Ինչպէս լոյս մի ամպի խորէն,
Ինքն էլ այնքան նուրբ է, յտակ,
Որ կը կարգաս իր մէջ իրեն:

Աղբիւրի մօտ կանգնած՝ անհարց
Նա կը նայի ջրին այն ջինջ,
Նախ կը ժպտայ, ապա յանկարծ
Խառնէ նըրան ծիծաղ ու թիչ...

Ու կը հալուին ծիծաղ ու ջուր,
Շըրա՛ջք. ինքն էլ ձուլուեց թափով,
Գարձաւ ձերմակ-ձերմակ փրփուր...
Ափին մընաց դատարկ սափոր:

ԵՂԲԱՅՐԸ

Նա ասպետ է ձերմակ հագած,
Գանգուրները իջած ուսին.
Սուրն իր՝ շանթի մի շերտ կանկած,
Ինքն էլ կարծես սիրան է լոյսի:

ձերմակ ձի մի ունի իր տակ,
Լոյսի մի գունտ՝ հոգի արշաւով.
Կ'ասպատակէ նա համարձակ,
Ինչպէս արեւն իր երկնքով:

Ծիծաղ լոյսեր ցանելով շուրջ.
Գէպ ինձ կը գայ ըշտապ, ըշտապ...
Բայց... հեռու է, որպէս անուրջ
Տիեզերքի ծոցում անափ:

Խորխորատ մի կայ մեր միջեւ
Ու այն անցնելն անիջնար է...
Խորտակուեցա՛ւ... կ'երթայ մինչեւ
Ուր որ հոգիս կը նշմարէ:

Վ. ՆՈՐԵՆՑ